

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը 90 փարեկան է

2025 թ. տարեվերջին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի 90-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում, որին մասնակցեցին պետական, դիվանագիտական, գիտակրթական ոլորտների ներկայացուցիչներ:



Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը: «Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանը Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գիտական, տեղեկատվական կենտրոններից է: Իր հիմնադրման օրվանից այն դարձել է գիտական մտքի պահպանման, փոխանցման և զարգացման հուսալի հենարան՝ պահպանելով եզակի հավաքածուներ, ձևավորելով մասնագիտական հատուկ միջավայր և ժամանակի մարտահրավերներին հա-

մընթաց նորացնելով իր գործառնությունները: Այստեղ հավաքված են համաշխարհային գիտական ժառանգության ամենաարժեքավոր տպագիր նյութերը: Այսօր, երբ գիտելիքի ստեղծումը և փոխանցումն առավել արագընթաց բնույթ են ստացել, Հիմնարար գիտական գրադարանը հաջողությամբ իրականացնում է նաև թվային մշակույթի զարգացման կարևոր առաքելություն՝ իր էլեկտրոնային հարթակներով և նորարարական ծրագրերով ապահովելով գիտության համար բաց, ժամանակակից և հուսալի միջավայր: Արժևորելով անցած ուղին՝ այսօր կարող ենք միայն շնորհակալություն հայտնել գրադարանի ղեկավարության, աշխատակազմի, գործընկեր կառույցների տարիների նվիրված աշխատանքի համար: Նրանց շնորհիվ գրադարանը պահպանում է իր բարձր կարգավիճակը և շարունակում է մնալ գիտության զարգացման անփոխարինելի հենասյունը», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Աշոտ Սադյանը նշեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններից հետո ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը բացառության կարգով շարունակելու է մնալ ԳԱԱ կազմում: «Վստահ են, որ գրադարանը նաև առաջիկա տասնամյակներում կշարունակի իր կարևոր առաքելությունը՝ որպես գիտության հզորացման, կրթության զարգացման և հանրային գիտակցության բարձրացման հուսալի գործընկեր», - նշեց Աշոտ Սադյանը:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը համախմբում է շուրջ 3.5 միլիոն միավոր գիտական աշխատություն, հազվագյուտ և արժեքավոր տպագրություն, ձեռագրեր և արխիվային փաստաթղթեր, ժամանակակից էլեկտրոնային ռեսուրսներ: «Այստեղ ձևավորվել, հասակ են առել գիտականների սերունդներ, ծնվել են գաղափարներ, պահպանվել է ազգային և համամարդկային հիշողությունը: Այսօր գրադարանը միայն գրքերի պահոց չէ. այն կենդանի միջավայր է, որտեղ

ծգուում ենք համադրել ազգային ավանդույթը և նոր տեխնոլոգիաները: Մեր առջև կանգնած է պատասխանատու, բայց ոգեշնչող առաքելություն՝ պահպանել գիտական ժառանգությունը և գրադարանը դարձնել ժամանակակից գիտական հաղորդակցության կենտրոն», - ասաց ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Մայա Գրիգորյանը:



Միջոցառման ժամանակ ներկայացվեց գրադարանի պատմությունը, ցուցադրվեցին տպագիր ժառանգության բացառիկ նմուշներ: Շնորհավորական ելույթներով հանդես եկան գործընկեր կառույցների ղեկավարներ, գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներ: Աշոտ Սադյանը ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրերով պարգևատրեց գրադարանի բազմամյա աշխատանքային գործունեություն ծավալած աշխատակիցներին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանն ամփոփեց 2025 թ. գործունեության արդյունքները



Ս/թ. փետրվարի 3-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքում ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանն ամփոփեց 2025 թ. գործունեության արդյունքները:

2025 թվականի ընթացքում ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողների կողմից իրականացվել է 9-ը նախագիծ, հրապարակվել 63 գիտական աշխատություն: Աստղադիտարանի գիտաշխատողները մասնակցել են 77 գիտաժողովների, ներկայացրել 76 զեկույց, ունեցել 42 արտասահմանյան գործուղում, 10-ը՝ ներհանրապետական: Կազմակերպվել են 2 ընդհանուր ժողով, 14 գիտական խորհրդի նիստ: Երկու մասնագետ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն:

2025 թ. ընթացքում ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի կողմից և մասնակցությամբ անցկացվել են մի քանի տասնյակ միջոցառումներ՝ գիտաժողովներ, գիտական դպրոցներ, ճամբարներ, սեմինարներ: Դրանցից են AHME-2 և ASBD-3 միջազգային գիտաժողովները, 17-րդ հայ-վրացական (Բյուրական-Աբասթուան) աստղագիտական կոլոքվիումը, 4-րդ Բյուրականյան միջազգային ամառային դպրոցը: Աստղադիտարանի գիտնականները մասնակցել են Եվրոպական աստղագիտական

ընկերության (EAS) տարեկան համագումարներին:

2025 թ. ընթացքում ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանն ունեցել է 760 հյուր Հայաստանից և արտերկրից: Արեգ Միքայելյանը նշեց, որ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը համագործակցում է 23 երկրի հետ: Նա շեշտեց, որ 2025 թ. հազեցած և արդյունավետ է եղել տեղական և միջազգային տարբեր ծրագրերով ու միջոցառումներով, ինչն ակնկալվում է նաև 2026 թ.-ին: Արեգ Միքայելյանը նաև ներկայացրեց 2026 թ. իրականացվելիք ծրագրերն ու միջոցառումները, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի արժեքի 15-ամյակը, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի աստղացուցարանի բացումը, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի (Հայ աստղագիտության պատմության) թանգարանի բացումը, CAP-2026-ը, «Մեր անկայուն Տիեզերքը» միջազգային գիտաժողովը, SWCA 5-րդ տարածաշրջանային աստղագիտական աշխատաժողովը, Լոնդոնի ճարտարապետական ասոցիացիայի դպրոցը, ICOMOS ամառային դպրոցը, Բյուրականյան փառատոնը (BAO Fest), 18-րդ հայ-վրացական աստղագիտական կոլոքվիումը (Աբասթուանի աստղադիտարան) և այլ միջոցառումներ: 2026 թ. ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը կնշի հիմնադրման 80-ամյակը:

Ասուլիսի ընթացքում տեղի ունեցավ նաև 2025 թ. գիտական (աստղագիտական) լրագրության ամենամյա մրցույթի մրցանակաբաշխությունը: Մրցանակները հանձնվեցին երեք անվանակարգերում.

- * Լավագույն հեղինակային հոդված, մրցանակակիրներ՝ Ա. Գ. Կարապետյան (168 ժամ) և Զրայր Նազարյան (Արմենպրես):
- * Լավագույն հեղինակային ծայնա/տեսանյութ, մրցանակակիրներ՝ Լիլիթ Մադուց (ՄԻՐ հեռուստառադիոընկերություն) և Սևակ Վարդումյան:
- * 2025 թվականի առավել ակտիվ լրագրողի մրցանակ, մրցանակակիր՝ Զրայր Նազարյան (Արմենպրես):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Ակադեմիական Նոր հրատարակություններ

1. Դեղ.խումբ – Ավետիք Իսահակյան-150 (Դրեկյանական միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու):
2. Վ. Պետրոսյան- Հայոց ցեղասպանություն. հանցագործներ և հանցակիցներ:
3. Դեղ. խումբ – Նոր բառեր, պր. Թ:
4. Դեղ.խումբ – Ջահուկյանական ընթերցումներ, N 1 (22):
5. Ա. Աղայան - Հայ կերպարվեստը «Արաքս» հանդեսի էջերում (Սանկտ Պետերբուրգ, 1887-1898):
6. Լ. Երնջակյան - Ռուբեն Սարգսյանի աշխարհը. կոնպոզիտորը և ժամանակը:
7. Վ. Բայբուրդյան – Իրան (Երկրագիտական տեղեկատու):
8. Իսկանդարյան – Իրանի Իսլամական Հանրապետության կառավարման համակարգի ինը սյուները:
9. Ա. Մաթևոսյան – Ակնարկ քրիստոնեական բարոյագիտության:
10. Վ. Պետրոսյան – Հայկական հարցը Լոզանի կոնֆերանսում 1922-1923 թթ.:
11. Ա. Ճուղուրյան, Ա. Մխիթարյան – Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գիտաչափություն:
12. «Առաջավորասիական պատմավիպական կերպարները հայ բանասիրության մեջ», գիրք Ա (Է. Խենյանի աշխատասիրությամբ):
13. «Պատմաբանասիրական հանդես», 2025 թ., N 3:
14. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2025 թ., N 3:
15. «Բանբեր հայագիտության», 2025 թ., N 3:
16. «Գրականագիտական հանդես», 2025 թ., N 2:
17. «Գիտության աշխարհում», 2025 թ., N 4:

ԵԳԱԾ-ն ամփոփել է «Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում» մրցույթի 2025 թ. արդյունքները



«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» (ԵԳԱԾ) ամփոփել է «Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում» մրցույթի 2025 թ. արդյունքները:

Մրցույթի նպատակն է հնարավորություն ընձեռել երիտասարդ գիտնականներին մասնակցելու իրենց ոլորտի նորարարական մեթոդների և մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ուղղված դասընթացներին արտասահմանյան առաջատար գիտական կենտրոններում, նպաստելու ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:

Մրցույթի առաջին ենթածրագրով նախատեսվում է ֆինանսավորման տրամադրում երիտասարդ գիտնականներին՝ արտասահմանյան կենտրոններում վերապատրաստման համար: Այս ենթածրագրով շահառու են ճանաչվել Թամարա Համբարձումյանը ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտից, Մարիա Օհանյանը ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտից, Անահիտ Խլիվայանը ՀՀ ԳԱԱ Եկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնից, Աննա Ջաբրյանը ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնից, Անի Ավետիսյանը ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտից, Գայանե Տոնոյանը ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտից, Մարիամ Սարիբեկյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից, Պարզև Ղարիբյանը ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնից, Էլեն Սահակյանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանից, Ռոզա Գաբրիելյանը, Ռուզաննա Շուշանյանը և Լիլիթ Մելիքյանը Երևանի պետական համալսարանից:

Մրցույթի երկրորդ ենթածրագրով, որով նախատեսվում է ֆինանսավորման տրամադրում՝ արտասահմանյան գիտական կենտրոններում գիտական ստորաբաժանումների երիտասարդ ղեկավարների մասնագիտական վերապատրաստման համար, շահառու է ճանաչվել Նադա Միրաբյանը ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնից:

Չորրորդ ենթածրագրով նախատեսվում է ֆինանսավորման տրամադրում՝ արտասահմանյան մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացվող դասընթացներին մասնակցության համար: Այս ենթածրագրով շահառու են ճանաչվել Դերենիկ Անդրեասյանը ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանից և Լիլիթ Երանյանը Երևանի պետական համալսարանից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Տեղի է ունեցել «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» հաշվետու գիտաժողովը

2025 թ. տարեկան տեղի ունեցավ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» (ԵԳԱԾ) տարեկան հաշվետու գիտաժողովը: Միջոցառմանը մասնակցել են ԵԳԱԾ հանձնաժողովի անդամներ, վերջին երկու տարիների ընթացքում ծրագրի շրջանակում իրականացված մրցույթների շահառուներ, ինստիտուտների գիտաշխատողներ:

Գիտաժողովի ընթացքում ԵԳԱԾ հանձնաժողովը ներկայացրեց 2025 թվականին իրականացրած աշխատանքները, այդ թվում՝ հայտարարած մրցույթները, դրանց շրջանակում ընդունված հայտերի քանակը և գնահատման արդյունքները:

- * Գիտության հանրայնացման մրցույթ:
- * Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում մրցույթ:
- * Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականների խրախուսման մրցույթ:
- * Արտերկրի գիտնականների կարճատև այցելություններ ՀՀ գիտահետազոտական կազմակերպություններ մրցույթ:
- * Գիտահետազոտական աշխատանքի իրականացման օժանդակ ռեսուրսների ձեռքբերման մրցույթ:

Հաշվետու զեկուցումներով հանդես եկան այն գիտաշխատողները, ովքեր 2025 թվականի ընթացքում մասնագիտական վերապատրաստում են անցել արտասահմանյան գիտահետազոտական կենտրոններում: Նրանք ներկայացրին, թե ինչ դասընթացների են մասնակցել և ինչ կիրառական փորձ են ձեռք բերել:



ԵԳԱԾ հանձնաժողովի ներկայացուցիչները զեկուցողներին ուղղեցին մի շարք հարցեր՝ ուղղված ռիսկերի գնահատմանը և ստացած գիտելիքների կիրառման հնարավորություններին հայաստանյան գիտական ինստիտուտներում: Շահառուները օրինակներով ներկայացրին ձեռք բերված փորձի կիրառման արդյունավետությունը տեղական գիտական ինստիտուտներում իրականացվող իրենց աշխատանքներում: Այն արտահայտվում է նաև արտերկրի և տեղական լաբորատորիաների միջև ձևավորված համագործակցությամբ և համատեղ հետազոտությունների իրականացմամբ: Ստացված արդյունքները հոդվածի տեսքով տպագրվում են համահեղինակությամբ:

Հաշվետու գիտաժողովի ընթացքում քննարկվեցին նաև 2026 թվականի համար նախատեսվող ծրագրերը:

Հայկական անվանումներով առնվազն 14500 փիեկերական օբյեկտներ կան



կով ասում են, որ Թուրքիան ենթարկվում է Հայաստանին աստղագիտության բնագավառում:

Միջին աստղադիտակներ՝ երեքից-չորս մետրանոց, երեսուն հատ կա աշխարհում, երկուսից-երեք մետրանոց՝ 70 հատ, որի մեջ մտնում է նաև Բյուրականի աստղադիտակը, որը 48-րդն է աշխարհում, բայց երբ այն տեղադրվեց 1975 թվականին, յոթերորդն էր:

Հիմա գոյություն ունեն վիրտուալ աստղադիտարաններ, որոնք օնլայն մեծ համակարգեր են ստեղծել: Ընդամենը 20 պետություն կա, որ մեծ աստղադիտարան ունի, որոնցից մեկը Հայաստանն է: Կա 91 աստղագիտական ամսագիր, որից երկուսը Հայաստանում է հրատարակվում: Միջազգային միության գիտաժողովներից յոթն անցկացվել են Հայաստանում: Սա շատ մեծ թիվ է: Հայկական անվանումներով առնվազն 14500 տիեզերական օբյեկտներ կան: Բյուրականի աստղադիտարանը համագործակցում է առնվազն 23 երկրի հետ: Համագործակցությունը հատկապես արդյունավետ է Ֆրանսիայի գործընկերների հետ: Սերտ համագործակցում ենք նաև Գերմանիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի հետ:

Եթե մեր պաշտոնյաները սովորաբար գործուղում են զնում պետական բյուջեի միջոցներով, ապա հայ աստղագետների մասնակցությունը գիտաժողովներում, տարբեր ծրագրերում այնքան են կարևորում մեր արտասահմանյան գործընկերները, որ հիմնականում իրենք են ֆինանսավորում: Բյուրականի աստղադիտարանի հեղինակությունն այնքան բարձր է, որ անգամ նորբեկյան մրցանակակիրները, առանց որևէ հոնորար ակնկալելու, իրենց միջոցներով են գալիս՝ մեր գիտաժողովներին և սեմինարներին մասնակցելու: Սա ես հպարտությամբ եմ ասում:

Այս ամենը ցուցանիշ է, որ աշխարհը մեզ ճանաչում է որպես աստղագիտական կարևոր երկիր:

Մեր տարածաշրջանում հիմա շատ ուժեղ մրցակցություն է սկսվել հարևան երկրների կողմից: Մինչև հիմա Հայաստանը բացարձակ առաջատար էր, բայց պարզվեց, որ թե՛ Վրաստանը, թե՛ Իրանն ու Թուրքիան, անգամ Ադրբեջանը սկսել են հետաքրքրություն ցուցաբերել և մեծ ներդրումներ անել այս բնագավառում: Օրինակ, եթե մեր դիտակն ամենախոշորն էր, հիմա Թուրքիան չորսմետրանոց դիտակ է տեղադրել, Իրանը երեք ու վեցմետրանոց: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նախագահը հատուկ հոգածության տակ է վերցրել իրենց աստղադիտարանը: Վրաստանի կառավարությունը տասը մլն դոլար է հատկացրել աստղադիտարանի զարգացման ծրագրերի համար: Մինչդեռ Բյուրականի աստղադիտարանի տարեկան բյուջեն 255 մլն դրամ է: Նոր թվային սարքերը շատ թանկ են, իսկ հները հնարավորություն չեն տալիս ավելի արդյունավետ աշխատելու, մրցակցելու: Ընթացիկ սպասարկման համար գումարներ են պետք: Սարքերը սպասարկող որակյալ ինժեներ պահելու համար ևս մեծ գումարներ են պետք: Եթե աստղագետները հերոսաբար աշխատում են նվազագույն աշխատավարձով, քանի որ իրենց մասնագիտությամբ միայն այստեղ կարող են աշխատել, ապա ինժեներները միշտ այլընտրանք ունեն: Եթե կտրուկ միջոցներ չծեռնարկվեն, շատ շուտով կպարզվի, որ Հայաստանը բոլորովին էլ առաջատար չէ տարածաշրջանում:

Մենք բարձրածայնել ենք, գրություն ենք ուղարկել կառավարություն, նույնիսկ գրություն ենք ուղարկել աստղադիտարանի 80-ամյակի միջոցառումների ֆինանսավորման համար, սակայն, ցավոք, պատասխանը մեկն է՝ գումար չկա: Իհարկե, գումար չունենալը հարաբերական հասկացություն է: Այստեղ կարևորելու հարցն է, թե ինչ առաջնահերթություն պետք է լինի: Եթե Բյուրականի աստղադիտարանն ազգային արժեք է ճանաչվել, մի՞թե հնարավոր է 80-ամյակի միջոցառումները չֆինանսավորել:

Մեծ իրարանցում է սկսվել ակադեմիական քաղաքի հետ կապված: Ես հիմա նույնիսկ չեմ ցանկանում դիտարկել դրա լավ ու վատ կողմերը, բայց փաստն այն է, որ իրարանցում է: Մեր դեպքում դեռ որևէ բան չեն ասում, միգուցե ազգային արժեքներին ձեռք չտան, և ընդհանրապես ինչպես կարող է Բյուրականի աստղադիտարանը վերցնեն տեղափոխեն ակադեմիական քաղաք, բայց մյուս հիմնարկների համար ես շատ անհանգիստ եմ, որովհետև եթե այս ծրագիրն իրականանա, առնվազն մեկ տարի խառնաշփոթ է լինելու, իսկ մեկ տարին բավական է, որ գիտնականների զգալի մասը թողնի հեռանա և գիտական մակարդակը չհաջողվի վերականգնել: Նման հարցերում շատ զգույշ պետք է լինել, նույնիսկ, եթե թվա, որ դրական նախագիծ է: Նայում են արտասահմանյան փորձին, դիտարկում կամպուսների օրինակները, բայց այդ կամպուսները գոյոյից են հիմնադրվել ու աստիճանաբար զարգացրել, ոչ թե արդեն գործող կառույց են վերցրել ու արհեստականորեն տեղափոխել:

Հայ ժողովրդի արժանավոր պավակը

(Ավետիք Բուռնազյանի ծննդյան 120-ամյակի առթիվ)



Խորհրդային Միության հայազգի նշանավոր գործիչների շարքում պատվավոր տեղ է զբաղեցնում Ավետիք Իգնատի Բուռնազյանը, ով զգալի ներդրում ունի ԽՍՀՄ առողջապահական համակարգի կազմակերպման և բժշկագիտության զարգացման գործում: Նա ատոմային բնագավառի բժշկության հիմնադիրներից է, մասնակցել է միջուկային սուզանավերի անձնակազմի, տիեզերական թռիչքների կենսաբժշկական աջակցության կազմակերպման խնդիրների լուծմանը: Բժշկական ծառայության գեներալ-

լեյտենանտ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Բուռնազյանը 25 տարի շարունակ եղել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալը: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է Լենինի 6, Աշխատանքային կարմիր դրոշի 3, Հոկտեմբերյան հեղափոխության, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի, «Պատվո նշան» շքանշաններով, արժանացել է Լենինյան և Պետական մրցանակների:

Ավետիք Բուռնազյանը ծնվել է 1906 թ. ապրիլի 20-ին Երևանի նահանգի Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) քաղաքում: 1924 -1928 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում: Այնուհետև ուսումը շարունակել է Լենինգրադում: 1930 թ. Ա. Կիրովի անվան ռազմաբժշկական, իսկ 1935 թ.՝ Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիաներում ավարտելուց հետո աշխատանքի է անցել ԽՍՀՄ պաշտպանության նախարարության համակարգում: Եղել է ռազմասանիտարական բաժնի պետի տեղակալ: 1935-1940 թթ. ղեկավարել է Մոսկվայի մարզային կլինիկական և 1-ին բժշկական ինստիտուտների ռազմասանիտարական ամբիոնները: 1938 թ. նրան շնորհվել է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1939 թ. սեպտեմբերին Ա. Բուռնազյանը մասնակցել է Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսիայի ազատագրմանը, իսկ 1939-1940 թթ.՝ Խորհրդա-ֆիննական պատերազմին՝ որպես 15-րդ բանակի սանիտարական բաժանմունքի պետ: Բժշկական ծառայության գնդապետի կոչումով Ա. Բուռնազյանը մասնակցել է նաև Հայրենական մեծ պատերազմին: Սկզբում եղել է Հարավային, ապա Կալինինի ռազմաճակատների սանիտարական ծառայության պետը: Այդ ռազմաճակատների կազմում էլ նա ակտիվորեն մասնակցել է Մոսկվայի ճակատամարտին: Նրա ղեկավարությամբ սանիտարական բուժանձնակազմը փրկել է հազարավոր զինվորների կյանքեր, և Ա. Բուռնազյանին շնորհվում է Լենինի առաջին շքանշանը: Մոսկվայի ճակատամարտից հետո նա մշակակվեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի սանիտարական վարչության պետ: 1943թ. մարտին նրան շնորհվեց բժշկական ծառայության գեներալ-մայորի զինվորական կոչում:

Նա ակտիվ մասնակցել է Բելառուսիան ազատագրելու «Բագրատիոն» գործողությանը, որի ընթացքում, ռազմաճակատի սանիտարական վարչության աշխատանքները հնտորեն ղեկավարելու համար, Ա. Բուռնազյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Յուրիանին Բաղրամյանի վկայությամբ. «...շնորհիվ Ա. Ի. Բուռնազյանի եռանդուն ջանքերի՝ տասնյակ հազարավոր վիրավորներ փրկվեցին մահից»: Նա այնուհետև մասնակցել է Մերձբալթիկայի և Արևմտյան Պրուսիայի ազատագրմանը և 1945թ. հունիսին արժանացել բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտի կոչման:

1945 թ. օգոստոսի 19-ից մինչև սեպտեմբերի 2-ը նա մասնակցել է Խորհրդա-ճապոնական պատերազմին՝ որպես Զեռավորարևելյան 2-րդ ռազմաճակատի սանիտար-

ական ծառայության վարչության պետ: Նրա պարգևատրման թերթիկում ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Մ. Պուրկաևը նշել է. «Հրամանատարության առաջադրանքները ժամանակին և հմտորեն կատարելու, ռազմաճակատի սանիտարական ստորաբաժանումների աշխատանքները մարտական գործողությունների ընթացքում ճիշտ կազմակերպելու համար ընկեր Բուռնազյանը արժանի է պարգևատրման Կարմիր դրոշի շքանշանով»:

Խորհրդա-ճապոնական պատերազմի ավարտից հետո գեներալ-լեյտենանտ Ա. Բուռնազյանը մինչև 1946 թ. աշխատել է որպես Զեռավորարևելյան ռազմական օկրուգի սանիտարական վարչության պետ:

1947 թ. տեղափոխվել է Մոսկվա և պատասխանատու պաշտոններ զբաղեցրել առողջապահական համակարգում: 1956 թ. նշանակվել է ԽՍՀՄ առողջապահության նախարարի տեղակալ և այդ պաշտոնում աշխատել է մինչև 1981 թ.: Միաժամանակ այդ տարիներին նա եղել է ԽՍՀՄ կառավարությանն առընթեր Երրորդ գլխավոր վարչության պետը: Այդ վարչությունը հատուկ կազմավորվել էր՝ ատոմային զենքի ստեղծման նպատակով: Ա. Բուռնազյանի առաջարկով և Ի. Կուրչատովի հավանությամբ 1947 թ. ստեղծվեց ռադիոակտիվ լաբորատորիա, որտեղ տարվում էին բժշկական նպատակներ և սանիտարաբիոգենիկ աշխատանքներ կապված ատոմային զենքի ստեղծման ծրագրի հետ: Երկու տարի անց այդ լաբորատորիայի հենքի վրա ստեղծվեց ԽՍՀՄ առողջապահության նախարարության բիոֆիզիկայի ինստիտուտը:

Ա. Բուռնազյանի աշխատակիցները բարձր էին գնահատում նրա կազմակերպչական տաղանդը, արհեստավարությունը, մտքի թռիչքը, պատասխանատվության զգացումը: Մարդկանց առողջապահության ապահովումը մշտապես եղել է Ա. Բուռնազյանի ամենօրյա տեսադաշտում: Դա հատկապես դրսևորվեց ատոմային ռումբի փորձարկման ժամանակ սուզանավերի և տիեզերանավերի անձնակազմերի բժշկական սպասարկման աշխատանքներում: Ա. Բուռնազյանի ջանքերով կարճ ժամանակում ստեղծվեց ատոմային բնագավառի միասնական բժշկասանիտարական համակարգ:

Ա. Բուռնազյանը 1949 թ. օգոստոսի 19-ին Սեմիպալատիկոնկում առաջին ատոմային ռումբի փորձարկման ակտիվ մասնակիցներից էր, ճառագայթահարումից պաշտպանող անվտանգության ծառայության համակարգի ստեղծման և կազմակերպման ղեկավարը: ԽՍՀՄ-ում ատոմային զենքի փորձարկումից հետո խիստ անհրաժեշտ դարձավ միջուկային ճառագայթահարման դեմ պայքարելը: 1948 թ. օգոստոսին ակադեմիկոս Ի.



Ա. Բուռնազյանի անվ. բժշկական բիոֆիզիկական կենտրոնը

Կուրչատովը և Ա. Բուռնազյանը սկսեցին աշխատել ճառագայթահարման դեմ միջոցներ ստեղծելու ուղղությամբ: Վերջինիս ջանքերով այդ նպատակով ստեղծվեցին հատուկ բժշկասանիտարական հիմնարկներ (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և լաբորատորիաներ): Ռադիոակտիվ անվտանգության գործը ամուր հիմքերի վրա դնելու համար ԽՍՀՄ կառավարությունը ըստ արժանվույն գնահատեց Ա. Բուռնազյանի ծառայությունը. 1976 թ. նրան շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Ա. Բուռնազյանի անունով է կոչվում Ռուսաստանի Դաշնության բժշկական բիոֆիզիկական կենտրոնը: Ինքնին խոսում և աննախադեպ է այն փաստը, որ աշխարհի ամենաեղիմակավոր բժշկագիտական կենտրոններից մեկը 1990-ական թվականներից կրում է մեր անվանի հայրենակցի անունը, ինչը բնականաբար հպարտության զգացում է առաջացնում յուրաքանչյուրիս հոգում: Բավական է նշել, որ խոշորագույն այս կենտրոնում այսօր աշխատում են ավելի քան 700 բարձրակարգ բժիշկներ և գիտաշխատողներ, այդ թվում՝ ՌԴ ԳԱ 6 ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, 60-ից ավելի գիտության դոկտորներ և 200-ից ավելի գիտության թեկնածուներ:

Ավետիք Բուռնազյանը ճառագայթային բժշկության վերաբերյալ տասնյակ աշխատությունների հեղինակ է: Վախճանվել է 1981 թ. հոկտեմբերի 25-ին և հուղարկավորվել Մոսկվայի Կունցլյան գերեզմանոցում: Նրա անունով փողոցներ են անվանակոչվել Երևան և Գավառ քաղաքներում: Բուլղոբովի վերջերս Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը 2026 թ. օրացույց է հրատարակել ականավոր գործի անունով:

Կլիմենտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր

Ք.ա. 22-21-րդ դարերի վաղեմության Քարաշամբի գավաթի մասին հոդվածը սկոպուլյան ամսագրում



Ազդեցության բարձր գործակից ունեցող «История, археология и этнография Кавказа» (Scopus Q1) ամսագրում հրատարակվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Հմայակյանի և նույն ինստիտուտի նախկին հայցորդ Մոնիկա Միրզոյանի հեղինակային «Անյունների և ընծառյունների պատկերագրության

շուրջ Քարաշամբի գավաթի վրա» («On the Iconography of Lions and Leopard on the Goblet of Karashamb») (No 20, 3, 2024, 354-366) հոդվածը:

Հոդվածում առաջին անգամ խթանական սեպագիր աղբյուրներում պահպանված նյութերի համատեքստում վերլուծվել են Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ք.ա. 22-21-րդ դարերի վաղեմության Քարաշամբի գավաթի պատկերագրության որոշ դրվագներ:

Գավաթի գեղագրորդն անձնանկատելի էր և հետազոտողներ եզրակացրել են, որ Քարաշամբի գավաթի պատկերագրության մեջ կարելի է դիտարկել միջագետքյան, փոքրասիական և հարավկուկասյան պատկերագրության ոճական առանձնահատկություններ: Հրապարակված հոդվա-

ծում ուսումնասիրվել են Քարաշամբի գավաթի վրա առյուծների և ընծառյունների պատկերները՝ մատնանշելով դրանց հնարավոր զուգահեռները Փոքր Ասիայի մշակութային ավանդույթների հետ՝ հատկապես դիտարկելով վերջիններս խթանական գրավոր աղբյուրներում պահպանված նյութերի համատեքստում:

«Քարաշամբի գավաթի վրա առյուծների և ընծառյունների պատկերագրությունն առաջին անգամ դիտարկել ենք Ք. ա. երկրորդ հազարամյակով թվագրվող խթանական սեպագիր աղբյուրներում պահպանված նյութերի համատեքստում, ինչպես նաև կատարել գավաթի պատկերների որոշ համեմատություններ խթանական «Դարպասների տոնի» կամ Կիլան տոնի ընթացքի հետ: Գավաթի վրա պատկերված առյուծների

ու ընծառյունների վերլուծությանը բացահայտել ենք դրանց առնչվող սիմվոլիկ և ծիսական ընկալումներն ու կապն արքայական իշխանության հետ», - ասում է Հասմիկ Հմայակյանը և հավելում, որ այս ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է դարձել առավել ամբողջական պատկերացում կազմել Քարաշամբի գավաթը կերտողների աշխարհայացքի և սոցիալ-մշակութային մի շարք առանձնահատկությունների մասին:

Քարաշամբի արժաթ գավաթը հայտնաբերվել է 1987 թ. Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղում, միջին բրոնզեդարյան իշխանական մի դամբարանից կատարած հերթական պեղումների ժամանակ: Այն հայտնաբերվել է «արքայական» դամբարանում թաղման հարուստ գույքի հետ միասին և վկայում է Ք.ա. 22-21-րդ դարերում տե-



ղաբնիկների մետաղի մշակման և կիրառական արվեստում ունեցած բացառիկ առաջընթացի մասին: Գավաթի առկայությունն ապացուցում է, որ տարածաշրջանը լուրջ արտադրական և մշակութային կենտրոն է եղել և սերտ կապեր է ունեցել խթանական աշխարհի և Միջագետքի կենտրոնների հետ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«Գեղարդ» հիմնադրամի պատասխանն Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի նամակին

Վերջերս «Գեղարդ» հիմնադրամը բողոք-նամակ էր ստացել Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայից ստորագրված Ա. Բաքիխանովի անվան պատմության և ազգաբանության ինստիտուտի մոտ երկու տասնյակ գիտաշխատողների կողմից: Ադրբեջանցի «գիտնականները» բողոքում էին «Գեղարդ» հիմնադրամի գործունեության, հատկապես կայքէջի «Ազերֆեյթ», «Ազերվանդալիզմ» բաժիններում ներկայացված նյութերի դեմ: Բողոքի առանձնահատուկ թեման են դարձել «Գեղարդ» հիմնադրամի կողմից միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններին և պարբերականներին հղված այն բողոք-նամակները, որոնք ուղղված են՝ կասեցնելու ադրբեջանցի հեղինակների հակագիտական ու հակահայկական հրապարակումների տարածումը:

Ստորև ներկայացնում ենք հատվածներ հիմնադրամի պատասխան-նամակից.

«...Պատվից ցածր է անգամ անդրադառնալ ձեր այն պնդմանը, որ ներկայիս «Հայաստան» իբր առաջացել է «ադրբեջանական» խանութներով տարածքներում: Գիտական հիմքից և իրականությունից կտրված այդ քարոզչանյութը գիտական բանավեճի առարկա չի կարող դառնալ: Բավական է նշել, որ այդ տարածքներից մեկը, որը դուք անվանում եք «Իրևանի խանութներ», ավելի շուտ վկայում է պատմության, աշխարհագրության և տեղանվանության վերաբերյալ ձեր անբավարար գիտելիքների մասին: Ըստ երևույթի, դուք դժվարացել եք գիտակցել այն պարզ իրողությունը, որ այդ խանութներում են առաջացել Հայաստանի տարածքում և ոչ թե հակառակը:

Ձեր հայտարարությանն ի պատասխան, թե իբր դուք կարևորում եք պատմական փաստերն ու նախընտրում հիմնվել արխիվային նյութի վրա (թեև գործնականում տեղի է ունենում ճիշտ հակառակը), հարկ ենք համարում ձեզ հիշեցնել Ազգերի լիգայի հայտնի որոշումն Ադրբեջանի վերաբերյալ: Այս փաստաթղթում ուղիղ տեքստով ասված է, որ «մինչև 1918 թվականը «Ադրբեջան» անունով պետությունը գոյություն էր ունեցել, իսկ այն տարածքները, որոնց այժմ հավակնում եք, երբեք մեկ միասնական պետական կազմավորում չեն կազմել: Դրանք մտել են ավելի մեծ կայսրությունների՝ Մոնղոլական, ավելի ուշ՝ Պարսկաստանի, իսկ 1813 թվականից՝ Ռուսական կայսրության կազմի մեջ: Ավելին՝ նույն որոշման մեջ հստակ ամրագրված է, որ «նոր հանրապետությանը տրված «Ադրբեջան» անվանումը փոխառված է, այն ոչնչով չի տարբերվում հարևան պարսկական նահանգի նույնանուն անվանումից»:

Կարծում ենք, բավարար հմտություններ կունենաք՝ ինքնուրույն ծանոթանալու Ազգերի լիգայի փաստաթղթի բնօրինակ տեքստին:

«Il est intéressant d'observer que ce territoire, qui occupe une superficie de 40.000 milles carrés, ne paraît jamais auparavant avoir constitué un État, mais a toujours été compris dans les fédérations plus vastes comme l'Empire Mongol ou Persan et, depuis 1813, l'Empire Russe. Le nom d'Azerbaïdjan, choisi pour désigner la nouvelle République, est aussi celui de la province persane voisine»:

Այս ձևակերպումն ամբողջությամբ փաստում է պատմական այն իրողությունը, որը դուք գիտակցաբար ու միտումնավոր անտեսում եք:

Հաջորդիվ՝ դուք գրում եք, թե «Մենք [ադրբեջանցի] գիտնականներս, պատմական ճշմարտությունը

հասցրել ենք միջազգային գիտական համայնքին՝ հրապարակելով աշխատություններ, հոդվածներ...»:

Նախ՝ առաջարկում ենք չչտապել ինքներդ ձեզ գիտնական ու պատմաբան կոչելու հարցում: Գիտնականի կարգավիճակը ենթադրում է ոչ միայն հրատարակությունների և կոչումների ձևական առկայություն, այլև ակադեմիական էթիկայի անվերապահ պահպանում: Գիտնականները պատմություն չեն խեղաթյուրում, չեն մերժում բոլորին հայտնի փաստերը և աղբյուրներից ծաղկաքաղ արված առանձին դրվագներով պատմության մանիպուլյացիաներով չեն զբաղվում:

Գիտնականն իրեն չի կարող թույլ տալ գիտակցաբար անտեսել պատմական իրականությունը՝ ժխտելով Հայաստանի հազարամյա ժառանգությունը կամ յուրացնել հայկական, աղվանական, վրացական ու իրանական պատմաճակատային ժառանգությունը ու դրանք հայտարարել որպես «ադրբեջանական»: Ավելին, գիտնականները սովորաբար չեն հրապարակում բացահայտ կեղծիք պարունակող նյութեր և առավել ևս չեն հպարտանում նման արդյունքներով:

Անդրադառնանք ձեր հայտարարության մյուս ձևակերպմանը, թե իբրև դուք «նոր պատմություն եք գրում և այն հասցնում եք միջազգային հանրությանը», ապա բողոքում եք, որ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը բողոքարկում ու բարձրաձայնում է այն գիտական տվյալների բազաների և անսագրերի գործունեությունը, որտեղ դուք տևական ժամանակ է՝ հրապարակում եք ձեր հակագիտական և հակահայկական տեքստերը:

Հենց սրանով էլ բացահայտվում է ձեր շարադրանքի բուն էությունը: Դուք բողոքում եք այն փաստի դեմ, որ «Գեղարդ» հիմնադրամի բողոք-նամակներին արձագանքելով՝ արտերկրի պարբերականներն ու գիտատեղեկատվական շտեմարաններն սկսել են ավելի խիստ մոտեցում ցուցաբերել ձեր հրապարակումների նկատմամբ, ինչի արդյունքում դուք զրկվում եք ձեր հակահայկական թեզերի տարածման հնարավորությունից:

Սակայն փորձեք հասկանալ՝ նման դիրքորոշումը գիտական հանրության բնական ու ենթադրելի արձագանքն է, որով փորձ է արվում պաշտպանել գիտությունն ու գիտելիքն արժեզրկումից, իսկ անաչառ պատմական հետազոտությունները՝ քաղաքականացված քարոզչանյութերով փոխարինելու փորձերից:

Եթե մեր գործողությունները որևէ կերպ սահմանափակել են ձեր կեղծ պատմական, քարոզչական և մեթոդաբանությունից զուրկ նյութերի հետագա տարածումը, ապա մենք անկեղծորեն ցավում ենք: Ցավում ենք, որ բավական ուշ ենք հանդես եկել նման նախաձեռնությամբ:

Ցավոք, պետք է փաստենք, որ ձեր վիճակն իսկապես բարդ է, քանի որ ակադեմիական միջավայրում աստիճանաբար ավելի քիչ տեղ է մնալու ձեզ՝ նման կեղծարարությունների հրատարակման ու առաջխաղացման համար:

Ձեզ համար այսուհետև իրավիճակն էլ ավելի է բարդանալու: Մենք ավելի զգոն ենք լինելու և հետևողական բողոքարկելու, բարձրաձայնելու, առանց ուշացման կանխելու այս իրողության կրկնության հնարավորությունը:

Ակադեմիական ամսագրերն ու տվյալների բազաները շարունակելու են ստանալ մեր պաշտոնական հորդորագրերն ու բողոք-նամակները՝ առավել ուշադրությամբ դիտարկելու ձեր նյութերը և թույլ չտալու

դրանց հրապարակումն այն դեպքերում, երբ դրանք կհակասեն ակադեմիական բարեվարքությանը՝ հանձնված հակահայկական բովանդակությամբ...

Ամփոփելով թույլ տվեք ձեզ՝ «պատմաբաններին», առաջարկել ինտելեկտուալ մի փոքրիկ մտավարժանք: Հնարավոր է՝ դրա համար ստիպված լինեք կրկին համախմբել «Գեղարդ» հիմնադրամի դեմ բողոք-նամակը ստորագրած բոլոր «պատմաբանների» և համատեղ կատարել այդ մտավարժանքը: Հորդորում ենք ձեզ անպայման կատարել այդ մտավարժանքը, քանի որ այն կօգնի ձեզ՝ էլ ավելի մոտենալու պատմական իրական փաստերին:

Նոր ժամանակներում, այսինքն՝ 17-18-րդ դարերում, երբ Եվրոպայում տպագրությունը սկսեց արագ զարգանալ, լույս տեսան «Հայոց պատմությանը» նվիրված բազմաթիվ հրատարակություններ և ուսումնասիրություններ:

Այսպես, կարող եք ծանոթանալ 17-րդ դարի սկզբի 1613 թվականի «Երուսաղեմի, Կիպրոսի, Հայաստանի պատմությունը» հրատարակությանը (Histoire générale des royaumes de Hierusalem, Cypre, Arménie et lieux circonvoisins [tienne de Lusignan] կամ 1739 թվականին հրատարակված «Քրիստոնեության պատմությունը Հայաստանում և Եթովպիայում» (Maturin Veyssière La Croze, Histoire du christianisme dEthiopie et dArménie Paris, 1739), կամ 1736 թվականին Լոնդոնում «Historiae Armeniacae» վերնագրով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» լատիներեն թարգմանությանը և այլն:

Սրանք և բազմաթիվ այլ օրինակներ վկայում են, որ արդեն 17-րդ դարի սկզբից, երբ Եվրոպայում սկսել էր զարգանալ տպագրական գործը, եվրոպական հրատարակչություններում գիտական տպագրություններ էին լույս ընծայվում Հայաստանի պատմության վերաբերյալ:

Նաև ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ Եվրոպայում Հայաստանի պատմության վերաբերյալ տպագիր աշխատություններ հայտնվել են արդեն 17-րդ դարի սկզբին՝ հենց այն ժամանակ, երբ, համաձայն աղբյուրների հաղորդման, ձեր (հնարավոր) նախնիները նոր էին սկսել «քոչել» դեպի Հայաստան, Վրաստան, Շիրվան և հարակից այլ երկրներ:

Այս ամենին ծանոթանալուց հետո առաջարկում ենք ձեզ՝ փորձեք 17-18-րդ դարերի տպագրությունների շարքում գտնել «Ադրբեջանի պատմություն» կամ «Ադրբեջանի ժողովրդի պատմություն» կոչվող գեթ մեկ ուսումնասիրություն կամ հրատարակություն:

Ստիպված ենք ձեզ միանգամից հիասթափեցնել. այդպիսիք չկան: Չկան տրամաբանական և գիտական ակնհայտ իրողությամբ պայմանավորված: Միանգամայն ակնհայտ է, որ այս ժամանակահատվածում Ադրբեջանը՝ որպես պատմական և քաղաքական սուբյեկտ, գոյություն չուներ, հետևաբար՝ չէր կարող լինել նրա «պատմությանը» նվիրված պատմագրական ավանդույթ կամ հրատարակություն:

Այս ամենը փաստելով՝ մենք կասկածի տակ չենք դնում ժամանակակից ադրբեջանական հասարակության՝ սեփական պատմագրություն ձևավորելու իրավունքը: Սակայն հորդորում ենք պատմական նոր հայեցակարգը և Ադրբեջանի նոր պատմությունը շարադրել ակադեմիական չափանիշներին համապատասխան, կեղծիքների բացառմամբ և աղբյուրների ու փաստական նյութի նկատմամբ ազնիվ մոտեցմամբ:

ՀՀ ԳԱԱ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ, 28.11.2025թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը համագործակցության հուշագիր կնքեց Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հետ



Վերջերս ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գոհար Իսկանդարյանը և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ռեկտոր Արմեն Ծատուրյանը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Հուշագրով նախատեսվում է իրականացնել համատեղ գիտահետազոտական ծրագրեր, կազմակերպել հանրապետական

և միջազգային գիտաժողովներ, սեմինարներ ու թեմատիկ քննարկումներ, մշակել և հրապարակել գիտական հոդվածներ, դասագրքեր, ուսումնական նյութեր, ուսումնասնության շրջանակում Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ուսանողները հնարավորություն կունենան Արևելագիտության ինստիտուտում անցնելու գիտահետազոտական պրակտիկա, պատրաստելու ասպիրանտական թեզեր:

Ավելի վաղ Արևելագիտության ինստիտուտը համագործակցության հուշագրեր էր կնքել Շիրակի և Գորիսի պետական համալսարանների և ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի հետ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին


Ո՞ր տեղում է Հայաստանը IQ-ի ցուցանիշով

International IQ Test-ը հրապարակել է երկրների բնակչության ինտելեկտի միջին գործակցի (IQ) տարեկան թարմացվող վարկանիշի հետազոտության արդյունքները:

Վարկանիշը կազմված է միջազգային IQ ռեսեսորի տվյալների հիման վրա 2026 թ. սկզբի դրությամբ:

Այն կազմվել է 137 երկրի և տարածքի 1,2 միլիոն մարդու թեստերի արդյունքների հիման վրա: Բոլոր հարցվածները կատարել են նույն առաջադրանքները՝ իրենց մտավոր կարողությունները գնահատելու համար:

Հայաստանը, ըստ վարկանիշի, զբաղեցրել է 26-րդ տեղը, Վրաստանը՝ 21-րդ, Ադրբեջանը՝ 57-րդ, Թուրքիան՝ 69-րդ, Ռուսաստանը՝ 6-րդ, իսկ Իրանը՝ 4-րդ: Առաջատարներ են դարձել Հարավային Կորեան, Չինաստանը և Ճապոնիան:



ՄՏԻՆԵՐԻ ՀԱՐՔՆԵՐ



Տասնամյակներ շարունակ բարձրագույն կրթությունը զարգացել է համեմատաբար կայուն և կանխատեսելի ձևաչափերով: Հայաստանի բուհական համակարգում, ինչպես նաև աշխարհի մեծ մասում, ձևավորվել են երեք հիմնական կրթական մոդելներ՝ առկա, հեռակա և հեռավար-հիբրիդային ուսուցում:

Առկա կրթությունը համարվում է բարձրագույն կրթության դասական մինչ այժմ գերիշխող մոդելը: Այն հիմնված է ֆիզիկական ներկայության, դասախոս-ուսանող անմիջական շփման, ակադեմիական միջավայրի սոցիալականացման վրա: Հայաստանի բուհերում առկա ուսուցումը շարունակում է մնալ հիմնական ձևաչափը հատկապես բակալավրիատում: Սակայն այն պահանջում է բավարար ժամանակի և զգալի ռեսուրսների տրամադրում, և միշտ չէ, որ հասանելի է բոլոր սոցիալական խմբերի համար:

Հեռակա կրթությունը ձևավորվել է որպես կրթության հասանելիության ընդլայնման միջոց՝ հնարավորություն տալով ուսումը համատեղելու աշխատանքային պարտականությունների կատարման հետ: Հայաստանի բուհերում հեռակա ուսուցումը կարևոր դեր է խաղում հատկապես մարզերի և սոցիալապես խոցելի խմբերի ուսանողների համար: Միևնույն ժամանակ բարձրագույն կրթության հեռակա մոդելը հաճախ քննադատվել է ուսուցման որակի, հետադարձ կապի սահմանափակության և ուսանողի ներգրավվածության ցածր մակարդակի համար:

Հեռավար-հիբրիդային կրթությունը, որը զուգորդվում է առցանց ուսուցմամբ, հատկապես արագ զարգացավ COVID-19 համավարակի ընթացքում: Այն համադրում է առկա և հեռավար ուսուցման տարրերը՝ ապահովելով որոշակի ճկունություն: Հայաստանում այս մոդելը ղեկավարվում է Կառավարության կողմից ինստիտուցիոնալացված փուլում է՝ կախված տվյալ բուհի տեխնոլոգիական և կազմակերպական կարողություններից: Նշենք, որ 2025-ին ընդունված Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքում սահմանվում է հեռավար կրթությունը և:

Այս երեք ձևաչափերը տարբեր են, սակայն ունեն ընդհանուր սահմանափակում. դրանք հիմնականում կառուցված են միևնույն ուսումնական տրամաբանությամբ, որտեղ ուսուցման գործընթացը մեծ մասամբ միատեսակ է բոլոր ուսանողների համար:

Կրթության 4-րդ ձևաչափը. նոր հնարավորություն հայկական բուհերի համար

Երկրի ուսանողների համար: Արհեստական բանականության ներգրավմամբ ձևավորվող նոր մոդելը կարելի է բնութագրել որպես կրթության **չորրորդ ձևաչափ**, որը չի փոխարինում նախորդներին, այլ կարծես վերափոխվում է դրանք: Այս ձևաչափի առանցքում անհատականացված ուսուցումն է, տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը և ուսումնական գործընթացի շարունակական հարմարեցումն ուսանողի կարիքներին:

ԱԲ հարթակները հնարավորություն են տալիս վերլուծելու ուսանողի առաջադիմությունը, ուսման տեմպը, սխալների կառուցվածքը և հետաքրքրությունները՝ ձևավորելով անհատական կրթական ուղիներ: Հայաստանի բուհերի համար սա կարող է նշանակել որակական նոր քայլ հատկապես բազմամարդ լսարաններում, որտեղ դասախոսը ֆիզիկապես չի կարող ապահովել անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ:

Կրթության հասանելիության տեսանկյունից ԱԲ-ն ընդլայնում է հիբրիդային մոդելի հնարավորությունները՝ վերածելով այն ավելի ճկուն և ներառական համակարգի: Ավտոմատ թարգմանությունը, տեսանյութի վերածույնը տեքստի և հակառակը, վիրտուալ օգնականները և խելացի ուսումնական միջավայրերը կարող են եական դեր խաղալ Հայաստանի սահմանամերձ և լեռնային համայնքների երիտասարդների համար՝ նվազեցնելով կրթական անհավասարությունը, գործընթաց ներառել նաև ուսանողներ հայկական սփյուռքից:

Արդյունավետության տեսանկյունից ԱԲ-ն կարող է եականորեն փոխել դասախոսի աշխատանքային բեռը: Թեստերի ավտոմատ ստուգումը, ակադեմիական ազնվության վերահսկումը, ուսումնական տվյալների վերլուծությունը հնարավորություն են տալիս դասախոսին կենտրոնանալու ուսուցման որակական բաղադրիչների վրա քննարկումների, ստեղծագործական առաջադրանքների և քննադատական մտածողության զարգացման միջոցով:

Մյուս կողմից կրթության 4-րդ ձևաչափի զարգացումը լիովին տեղավորվում է Հայաստանում ընդունված ռազմավարական փաստաթղթերի տրամաբանության մեջ: Մասնավորապես ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագրում շեշտվում է կրթության թվայնացման, ուսուցման ճկուն մոդելների և նոր տեխնոլոգիայի կիրառման անհրաժեշտությունը: ՀՀ կառավարության ծրագրում կարևոր տեղ է հատկացվում բարձրագույն կրթության մրցունակության բարձրացմանը, գիտության և կրթության ինտեգրմանը, ինչպես նաև թվային լուծումների ներդրմանը: ՀՀ թվայնացման ռազմավարությունը նախատեսում է արհեստական բանականության կիրառման խթանում հանրային ծառայությունների, այդ թվում՝ կրթության ոլորտում: Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության զարգացումը պիտի ձևավորի այն քաղաքական շրջանակը, որում կրթության 4-րդ ձևաչափը կարող է դառնալ ոչ թե ինքնանպատակ տեխնոլոգիական նորամուծություն, այլ համակարգային բարեփոխման գործիք:

Միևնույն ժամանակ աշխարհի լավագույն հետազոտական համալսարաններում ԱԲ-ի լայն կիրառումն առաջ է բերում էթիկական, մանկավարժական և սոցիալական լուրջ հարցեր տվյալների պաշտպանության, ալ-գորիթմների կանխակալության, թվային անհավասարության և ուսանողների ինքնուրույն մտածողության պահպանման տեսանկյունից: Հայաստանի համար սա պահանջում է ոչ միայն տեխնոլոգիական ներդրումներ, այլև կարգավորող մեխանիզմների, դասախոսների վերապատրաստման և ինստիտուցիոնալ վերահսկողության հետևողական զարգացում:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում կրթության 4-րդ ձևաչափի ներդրման մասին

Կրթության 4-րդ ձևաչափի գործնական կիրառումը ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում կարող է սկսվել ԱԲ-ի վրա հիմնված անհատական ուսումնական ուղիների ներդրումից: Մագիստրանտների և ասպիրանտների ակադեմիական առաջընթացի, հետազոտական հետաքրքրությունների և գիտական հմտությունների գնահատման հիման վրա հնարավոր է ձևավորել ճկուն ուսումնական պլաններ, որտեղ տեսական դասընթացները և հետազոտական աշխատանքը փոխկապակցված են: Այս մոտեցումը թույլ կտա ուսանողներին վաղ փուլից ինտեգրվել ԳԱԱ ինստիտուտների գիտական գործունեության մեջ և աշխատել ոչ թե ձևական, այլ իրական հետազոտական խնդիրների վրա:

Երկրորդ կարևոր քայլը ԱԲ-ով աջակցվող գիտահետազոտական մենթորության համակարգի ձևավորումն է: Երրորդ մակարդակում՝ ասպիրանտուրայում, հնարավոր է ներդրել հիբրիդային մենթորության մոդել, որտեղ դասական գիտական ղեկավարը լրացուցիչ կիրառում է թվային հետազոտական գործիքներ՝ գրականության ավտոմատ վերլուծություն, մեջբերումների քարտեզագրում, հետազոտական բացերի հայտնաբերում և այլն: Սա էականորեն կբարձրացնի ասպիրանտների գիտական աշխատանքի որակը և կհամապատասխանի աշխարհի առաջատար հետազոտական համալսարաններում կիրառվող practice-based research մոտեցմանը:

Վերջապես, կրթության և գիտության կապի ամրապնդման համար նպատակահարմար է ստեղծել ԱԲ-ի վրա հիմնված հետազոտական հարթակներ և տվյալների բազաներ, որոնք հասանելի կլինեն մագիստրանտներին և ասպիրանտներին՝ անկախ նրանց գտնվելու վայրից: Այս հարթակները կարող են միավորել ԳԱԱ ինստիտուտների հետազոտական տվյալները, միջազգային գիտական ռեսուրսները և համատեղ նախագծերի հնարավորությունները՝ խթանելով միջգիտակարգային հետազոտությունները և միջազգային համագործակցությունը: Այսպիսով, ԳԿՄԿ-ն, հավատարիմ մնալով հետազոտական համալսարանի վերածելու իր ռազմավարությանը, կարող է վերածվել ոչ միայն կրթական, այլև գիտական «ինկուբատորի»՝ ապահովելով գիտության շարունակական վերարտադրություն և միջազգային մրցունակություն:

Ատոմ Մխիթարյան
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկան, ֆիզմաթ գ.թ., մանկավարժության դոցենտ

ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց Գիտակրթական միջազգային կենտրոնի «EU Bridge» ծրագիրը

Ս/թ. հունվարի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «ԵՄ-ԿԱՍՈՒԻՉ. Հայաստանում բարձրագույն կրթության ամրապնդում եվրոպական նախագծերի կառավարման համար» (EU Bridge: Strengthening Higher Education for European Project Management in Armenia) միջազգային ծրագրի պաշտոնական բացման արարողությունը:

«EU Bridge» ծրագիրը միտված է նպաստելու Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի միջազգայնացմանը, ինստիտուցիոնալ զարգացմանը և եվրոպական բարձրագույն կրթության տարածքում Հայաստանի դերակատարության ամրապնդմանը:

Ներկաներին ողջունեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Արամ Պապոյանը: Նա ընդգծեց «EU Bridge» ծրագրի իրականացման կարևորությունը ՀՀ բուհերի կարողությունների զարգացման գործում և բարի երթ մաղթեց Ծրագիրն իրականացնող կազմակերպություններին:

«EU Bridge» ծրագրի մեկնարկը թե՛ ժամանակին է, թե՛ կարևոր: Հայաստանի համալսարանները հետզհետե ավելի ակտիվ են դառնում եվրոպական և միջազգային ծրագրերում: Այս աճող ներգրավվածությունը բացում է նոր հնարավորություններ, սակայն միևնույն ժամանակ ընդգծում է ինստիտուցիոնալ ամուր կառույցների, հմուտ մասնագետների և արդյունավետ նախագծերի կառավարման կարողությունների անհրաժեշտությունը՝ ապահովելու կայուն և բովանդակալից մասնակցություն: «EU Bridge» ծրագիրը մշակվել է՝ հենց այս կարիքներին ար-



ձագանքելու նպատակով: Որպես Ծրագրի համակարգող հաստատություն ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը լիովին հանձնառու է աջակցելու այս գործընթացին: Միևնույն ժամանակ մենք խորապես համոզված ենք, որ «EU Bridge»-ի հաջողությունը կախված է ամուր գործընկերությունից, համատեղ պատասխանատվությունից և բոլոր կողմերի ակտիվ ներգրավվածությունից»,- ասաց ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյանը:

Ողջունելի խոսքով հանդես եկան ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ Վալերիա Շտերբան, Եվրասիա միջազգային համալսարանի ղեկավար Սուրեն Օհանյանը, «Erasmus+»-ի հայաստանյան գրասենյակի ծրագրերի համակարգող Մարիանա Սարգսյանը:

«EU Bridge» ծրագրի համակարգող Ատոմ Մխիթարյանը նշեց, որ Ծրագիրն ուղղված է բուհերի դասախոսական կազմի, հետազոտողների, վարչական աշխատակիցների և ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում կմշակվի եվրոպական նախագծերի կառավարման մասնագիտացված ուսումնական ծրագիր, կստեղծվեն Պիլոտային ակադեմիա, սոցիալական նորարարականության լաբորատորիա և գործնական մոդելավորման վրա հիմնված ուսուցման միջավայր:

«EU Bridge» երկամյա ծրագիրը համաֆինանսավորում է ստացել ԵՄ Էրազմուս+ ծրագրի շրջանակում և իրականացվելու է Հայաստանի, Իսպանիայի և Իտալիայի գործընկեր կառույցների համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համակարգմամբ՝ Հայաստանից Եվրասիա միջազգային համալսարանի, «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի, Իսպանիայից Մուրսիայի համալսարանի և «Էմպրեսաս քոն Վալորես» ՀԿ-ի, Իտալիայից Տուշայի համալսարանի մասնակցությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Կլիմայական անունալիաներով աչքի ընկնող թուփ 5 երկրներ

Վենեսուելա. հավերժական փոթորիկի կայսրություն



Եթե վախենում եք ամպրոպից, ապա հաստատ չպետք է մոտենաք Մարակայբո լիճ թափվող Կատատունք գետի գետաբերանին: Վենեսուելայի այս շրջանն իրավամբ համարվում է աշխարհի կայծակների մայրաքաղաքը: Այստեղ դիտվում է եզակի մթնոլորտային երևույթ, որը հայտնի է «Կատատունքի կայծակներ» անունով: Սա պարզապես ամպրոպ չէ, այլ գրեթե անդադար էլեկտրական փոթորիկ, որը կարող է շարունակվել տարվա ընթացքում մինչև 160 օր՝ յուրաքանչյուր գիշեր շուրջ 10 ժամ: Տեղանքի յուրահատուկ ռելիեֆը ստեղծում է իդեալական աերոդինամիկ «խողովակ»: Կարիբյան ծովից եկող տաք ու խոնավ օդային հոսքերը և Անդերից իջնող առող օդը բախվում են՝ առաջացնելով հզոր իոնացում: Երկինքն այստեղ փայլատակում է ժամում գրեթե 300 անգամ: Լուսարձակումն այնքան ուժեղ է, որ երևում է ավելի քան 400 կմ հեռավորությունից և պատմականորեն ծառայել է որպես բնական փարոս ծովագնացների համար:

Հատկանշական է, որ այս կայծակները գրեթե չեն ուղեկցվում որոտով, քանի որ տեղի են ունենում գերազանցապես ամպերի միջև՝ մեծ բարձրության վրա, այլ ոչ թե հարվածում են գետնին: Տեղացիները հարմարվել են բնության սարոթոսկոպի տակ ապրելու պայմաններին, սակայն անպատրաստ զբոսաշրջիկի համար Մարակայբո լճի գիշերները կարող են դառնալ իսկական հոգեբանական փորձություն. թվում է, թե երկինքը բառացիորեն բացվում է գլխիդ վերևում:

Չիլի. բացարձակ ծարափ երկիր

Չիլիի հյուսիսում է գտնվում Ատակամա անապատը՝ տեղանք, որը կլիմայագետները համարում են Երկրի ամենաչոր

վայրը: Տեղական կլիմայի պարադոքսալությունն այն է, որ գտնվելով խաղաղ օվկիանոսի ափին՝ այս տարածքը դարձրել է անձրև չի տեսնում: Հումքոլոտի սառը հոսանքը սառեցնում է օվկիանոսի վրայի օդը՝ ստեղծելով ինվերսիոն շերտ, որը խոչընդոտում է անձրևային ամպերի ձևավորումը, իսկ Անդերն արգելափակում են Ամազոնի ավազանից եկող խոնավ օդային զանգվածները: Արդյունքում Ատակամայի որոշ հատվածներում օդերևութաբանական կայանները պատմության ընթացքում երբեք տեղումներ չեն գրանցել: Տեղական



լանդշաֆտներն այնքան են հիշեցնում «այլմոլորակայինի», որ ՆԱՍԱ-ն օգտագործում է այս տեղանքը՝ մարսագնացների փորձարկելու համար: Խոնավության բացակայության պատճառով օդը գրեթե ստերիլ է. օրգանական մնացորդները չեն քայքայվում, այլ բնական կերպով մուսիֆիկացվում են:

Այնուամենայնիվ, նույնիսկ այս հավերժական երաշտի թագավորության մեջ երբեմն տեղի են ունենում կլիմայական հրաշքեր: Մի քանի տարին մեկ էլ Նինյո երևույթի ազդեցությամբ անձրևները հասնում են անապատ: Այդ ժամանակ ամառը դարձնակ ավազները հանկարծ ծածկվում են միլիոնավոր մանուշակագույն և վարդագույն ծաղիկներով: Այս երևույթը, որը հայտնի է որպես «Ծաղկող անապատ», տևում է ընդամենը մի քանի շաբաթ, որից հետո երկիրը կրկին ընկղմվում է բազմամյա քնի մեջ:

Շրջապատ. կյանք ջրվեժի տակ

Եթե Ատակաման չորության բռնում է, ապա Հնդկաստանի Մեգհալայա նահանգը, մասնավորապես Մաուսինգամ գյուղը, խոնավության բռնում է: Այս տարածաշրջանը պաշտոնապես ճանաչված է որպես մոլորակի ամենամեծ խոնավայր: Բենգալյան ծոցից եկող խոնավ մուսոնները բախվում

են Շիլլոնգի սարահարթին և, չունենալով առաջ շարժվելու հնարավորություն, ամբողջ խոնավությունը թափում են այս փոքր տարածքի վրա:

Տեղումների միջին տարեկան քանակն այստեղ գերազանցում է 11 000 մմ-ը, ինչը տասնյակ անգամներ ավելի է, քան անձրևոտ Լոնդոնում կամ Սանկտ Պետերբուրգում: Տեղացիներն ապրում են մշտական «ցնցուղի» պայմաններում: Մուսոնային սեզոնին անձրևը կարող է տեղալ շաբաթներով՝ առանց դադարի, իսկ տանիքներին հարվածող ջրի աղմուկն այնքան բարձր է, որ մարդիկ ստիպված են գոռալ՝ մինչև լսելու համար:

Սովորական հովանոցներն այստեղ անօգուտ են՝ ուժեղ քամիների պատճառով, ուստի օգտագործվում են «կնուպներ»՝ բամբուկից և բանանի տերևներից պատրաստված մեծ վահաններ: Խոնավությունն այնքան բարձր է, որ կամուրջները գետերի վրա չեն կառուցում, այլ աճեցնում են կաուչուկի ծառերի արմատներից, քանի որ փայտե կամ մետաղական կառույցները փտում են մի քանի սեզոնում: Սա եզակի օրինակ է, թե ինչպես է ճարտարապետությունը ենթարկվում կլիմայի թելադրանքին:

Եթովպիա. այլմոլորակային վառարան

Եթովպիայի հյուսիսում գտնվող Դանակիլ իջվածքը հաճախ նկարագրվում է որպես «Դժոխք Երկրի վրա»: Սա ոչ միայն մոլորակի ամենաչոր բնակեցված վայրերից մեկն է՝ միջին տարեկան ջերմաստիճանով (մոտ +34 °C, հաճախ գերազանցում է +50 °C-ը), այլև ֆանտաստիկ լանդշաֆտ ունեցող տարածք: Այստեղ կլիման ձևավորվում է ոչ միայն արևի, այլև երկրի ընդերքից եկող ջերմության շնորհիվ: Դանակիլը գտնվում է ակտիվ հրաբխականության և տեկտոնական սալերի տարանջատման գոտում:

Օդն այստեղ խեղդող և թունավոր է՝ հագեցած ծծմբի և քլորի գոլորշիներով, իսկ անձրևի փոխարեն կարելի է հանդիպել նեոնադեղմավուն ու կանաչ թթվային լճակների: Հիդրոթերմալ աղբյուրների մոտ առանց չնչառական պաշտպանիչ միջոցների գտնվելը կյանքի համար վտանգա-

վոր է: Չնայած այս ծայրահեղ պայմաններին՝ աֆար ժողովուրդը դարեր շարունակ ապրում է այստեղ՝ ձեռքով աղ հանելով կիզի արևի տակ:

Եթովպիայի կլիման այս տարածաշրջանում ցույց է տալիս, թե ինչպիսին կարող էր լինել Երկիրը իր ձևավորման վաղ փուլերում կամ ինչպիսին կարող է դառնալ էկոլոգիական աղետի դեպքում. գեղեցիկ, բայց մահացու վտանգավոր:

Իսլանդիա. հորիզոնական անձրևների երկիր

Իսլանդիան չի կարող պարծենալ ամենաբարձր ջերմաստիճաններով կամ ծայրահեղ առնամանիքներով, սակայն անշուշտ առաջատար է եղանակի փոփոխականությամբ և անկանխատեսելիությամբ: Տեղական ասացվածքն ասում է. «Եթե ձեզ դուր չի գալիս եղանակը, սպասեք հինգ րոպե, և այն կդառնա ավելի վատ»: Կղզին գտնվում է Գոլֆստրիմի տաք հոսանքների և Արկտիկայի սառցային քամիների բախման գոտում, ինչի արդյունքում մշտապես ձևավորվում են հզոր ցիկլոններ՝ առաջացնելով անհավանական ուժի քամիներ: Իսլանդական կլիմայի առանձնահատկությունը «հորիզոնական անձրևներ» է: Քամիները հաճախ այնքան ուժեղ են, որ ջրի կաթիլները թռչում են գրեթե գետնին գուզահեռ, իսկ հովանոցը դառնում է անօգուտ մի իր, որը կարող է ավելի շուտ տիրոջը տանել օվկիանոս, քան պաշտպանել խոնավությունից:

Ձմռանը փոթորիկները մի գիշերում կարող են տները մինչև տանիք ծածկել ձյան շերտով, իսկ ամռանը ջերմաստիճանը մեկ օրվա ընթացքում կարող է տատանվել +20 °C-ից մինչև սառնամանիք: Եթե դրան ավելացնենք նաև հրաբխային մոխիրը, որը քամին բարձրացնում է օդ՝ ստեղծելով յուրատեսակ փոշեհողմեր, կտառնաճաճ մոլորակի ամենադժվարին և քնահաճ կլիմաներից մեկը, որտեղ նախապես պիկնիկ պլանավորելը գրեթե անհնար է:

«Հիդրոթերմալ բառնության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն ԱՅԻՅԱՆ tert.am. 08.02.2026

Գիտնականները հայտնաբերել են Ալեքսանդր Մակեդոնացու հիմնած կորուսյալ քաղաքը

Դարեր շարունակ Հին աշխարհի կարևորագույն քաղաքներից մեկը թաքնված է եղել փոշու, պատերազմական գոտիների և փոփոխվող գետերի տակ: Տիբուսի Ալեքսանդրիա քաղաքը, որը ժամանակին Միջագետքը Հնդկաստանի և այլ երկրների հետ կապող առևտրային ծաղկուն կենտրոն էր, ուշ անտիկ շրջանից հետո անհետացել էր պատմական հիշողությունից: Պրոֆեսոր Ստեֆան Հաուզերի գլխավորած միջազգային հետազոտական խումբը հաջողությամբ հայտնաբերել ու մեկնաբանել է այս կորուսյալ մեգապոլիսը՝ բացահայտելով դրա վճռորոշ դերը Հին աշխարհի առևտրում:

Մ.թ.ա. IV դարում Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց Ալեքսանդրիայի տարածքը՝ փոխելով հին Մեդիանի արևելքի քաղաքական և տնտեսական լանդշաֆտը: Պատմական աղբյուրները նկարագրում են նրա վերադարձը Ինդոսի հովտից դեպի Միջագետք, որտեղ նա ծրագրում էր ջրային ճանապարհորդություն կատարել Եգիպտոս (Սուզա) դեպի Բաբելոն: Այդ ընթացքում Ալեքսանդրը նկատեց մի ռազմավարական խնդիր. Հարավային Միջագետքի ուժեղ տղմակալումն աստիճանաբար դեպի հարավ էր մղում Պարսից ծոցի ափագիծը՝ առկա նավահանգիստները դարձնելով անապատային:

Խնդիրը լուծելու համար Ալեքսանդրը հիմնեց նոր նավահանգստային քաղաք՝ Տիբուսի Ալեքսանդրիան՝ Տիբուսի և Քարուն գետերի միախառնման վայրից ոչ հեռու: Հետագայում քաղաքը հայտնի դարձավ որպես Խարաքս Սպասինու կամ Խարաքս Մայան. այն հիշատակվել է հռոմեացի հեղինակների կողմից և պատկերված է եղել նույնիսկ Սիրիայի Պալմիրա քաղաքում գտնված արձանագրություններում: Չնայած

այս հուշումներին՝ դրա ստույգ վայրը դարեր շարունակ անհայտ էր մնում:

Առաջին ժամանակակից վկայությունները հայտնվեցին 1960-ականներին, երբ բրիտանացի հետազոտող Ջոն Հանսմանը ռազմաօդային ուժերի օդաչուսանկարներում հայտնաբերեց բնակավայրի և քաղաքային պարիսպների լայնածավալ ուրվագծերը: Սակայն քաղաքական անկայունության և Իրանի սահմանի մոտ ընթացող զինված հակամարտության պատճառով հետագա հետազոտությունները տասնամյակներ շարունակ անհնարին դարձան:

Միայն 2014 թվականից օտարերկրյա հնագիտական արշավախմբերը վերադարձան Հարավային Իրաք: Հին Ուր քաղաքի մոտ աշխատող բրիտանացի հնագետներին տեղի իշխանություններն ուղղորդեցին դեպի Ջեբել Խայբեր: Նրանք ապշած էին ավերակների մասշտաբներից. զանգվածային քաղաքային պարիսպը ձգվում էր կիլոմետրերով և տեղ-տեղ հասնում մինչև ութ մետր բարձրության:

2016 թվականին սկսվեց պաշտոնական հետազոտական արշավը, իսկ քիչ անց նախագծին միացավ Ստեֆան Հաուզերը՝ Մեդիանի արևելքի հեղինակական հնագիտության առաջատար փորձագետներից մեկը:

Անվտանգության հետ կապված մտահոգությունների պատճառով հետազոտողները սկզբում հիմնվում էին ոչ ինվազիվ մեթոդների վրա: Մի քանի տարվա ընթացքում նրանք իրականացրել են ցամաքային լայնածավալ հետազոտություններ՝ ոտքով անցնելով ավելի քան 500 կիլոմետր և փաստագրելով հազարավոր կերամիկական քերտեր ու աղյուսներ: Անօդային թռչող սարքերով արված նկարահանումները թույլ տվեցին ստեղծել տեղանքի մանրամասն

թվային մոդելը, որը բացահայտեց զարմանալի փաստ. Տիբուսի Ալեքսանդրիա քաղաքը եղել է հսկայական, մանրակրկիտ կառուցապատված մեգապոլիս:

Հաուզերն այն նկարագրում է որպես Եգիպտոսի Ալեքսանդրիայի արևելյան համարժեք: Երկու քաղաքներն էլ հիմնվել են գետային համակարգերի և ծովային առևտրային ուղիների միախառնման տեղում՝ ծառայելով որպես դարպասներին շրջանների և բաց ծովի միջև: Ավելի քան 550 տարի Տիբուսի Ալեքսանդրիան եղել է Հին աշխարհի հեռավոր առևտրի կարևորագույն կենտրոններից մեկը:

Քաղաքի հատակագծի վերականգնման գործում առաջնային դեր խաղացին երկրաֆիզիկական հետազոտությունները: Օգտագործելով ցեզիումային մագնիսաչափեր՝ հետազոտողները հայտնաբերեցին փողոցներ, պատեր, ջրանցքներ և նույնիսկ արդյունաբերական կառույցներ: Արդյունքները ցույց տվեցին անտիկ շրջանին բնորոշ խոշոր բնակելի թաղամասերի առկայություն: Քաղաքը ներառել է նաև մոնումենտալ տաճարային համալիրներ, արհեստանոցներ՝ հնոցներով ու ձուլարաններով, ջրանցքներով միացված մեքերաղաքային նավահանգիստ և նույնիսկ պալատական համալիր՝ հավանաբար շրջապատված այգիներով կամ գյուղատնտեսական հողատարածքներով:

Արբանյակային լուսանկարները նաև բացահայտել են քաղաքից հյուսիս գտնվող ընդարձակ ոռոգման համակարգը, ինչը վկայում է բնակչությանը սննդով ապահովելու համար հացահատիկի լայնածավալ արտադրության մասին:

Մ.թ.ա. 300 - մ.թ. 300 թվականների ընթացքում Միջագետքի և Հնդկաստանի միջև առևտուրը կտրուկ ակտիվացավ՝ հասնելով



մինչև Աֆրանստան և Հիմաստան: Այդ ժամանակ Տիբուսի երկայնքով հիմնվեցին Սելևկիա և Կոտեսիփոն մեծ քաղաքները, որոնք դարձան կայսերական մայրաքաղաքներ: Ըստ հին աղբյուրների՝ միայն Սելևկիայի բնակչությունը 600,000 էր, ինչը ներմուծվող ապրանքների հսկայական պահանջարկ էր ստեղծում:

Ըստ Հաուզերի՝ Հնդկաստանից եկող գրեթե ողջ առևտուրն անցնում էր Տիբուսի Ալեքսանդրիայով: Քաղաքի ճակատագրի անխզելիորեն կապված էր այն սնունդ գետի հետ: Երկրաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ Տիբուսն աստիճանաբար տեղաշարժվել է դեպի արևմուտք՝ Ալեքսանդրիան կտրելով իր ջրային զարկերակից: Մինչև մ.թ. III դարը քաղաքը հայտնվեց Եփեսոսի և Պարսից ծոցից հեռու, որոնք նահանջել էին դեպի հարավ՝ գրեթե 180 կիլոմետր:

Ձրկվելով դեպի գետ ելքից՝ Տիբուսի Ալեքսանդրիան կորցրեց իր տնտեսական ու քաղաքական զրահակությունը և ի վերջո լքվեց: Սակայն նրա ժառանգությունը պահպանվեց. հետագայում ժամանակակից Բասրա քաղաքը ժառանգեց տարածաշրջանի գլխավոր նավահանգստի դերը:

Այժմ նախատեսվում են հետագա պեղումներ: Ինչպես նշում է պրոֆեսոր Հաուզերը, Տիբուսի Ալեքսանդրիան դեռևս բազմաթիվ չբացահայտված գաղտնիքներ ունի, իսկ դրա վերահայտնաբերումը փոխում է մեր պատկերացումները Հին աշխարհի գլոբալացման մասին:

Արցախի «Տարիկ-պապիկ» հուշակոթողը վանդալիզմի է ենթարկվել

Արցախի խորհրդանիշ «Մենք ենք մեր սարերը» («Տարիկ-պապիկ») արձանն Ադրբեջանի կողմից վանդալիզմի է ենթարկվել: Սոցցանցերում տարածվում են այդ մասին փաստող նոր տեսանյութեր:

Մասնավորապես ազգությամբ թալիշ ադրբեջանցի լրագրող Ռահիմ Շալիևն այս մասին գրառում է կատարել «X»-ի իր միկրոբլոգում՝ արձանի տեսանյութը հրապարակելով: «Ադրբեջանցիների կողմից վանդալիզմի է ենթարկվել «Մենք ենք մեր սարերը» պատմական հուշարձանը, որը համարվում է Արցախի խորհրդանիշ»,- նշել է Շալիևը:

Երա ներկայացրած տեսանյութում արձանի վրա առջևի հատվածում, երևում են ադրբեջաներենով արված տարբեր գրառումներ:

Լրագրողի հրապարակման մեկնաբանություններում մեկ ուրիշ օգտատեր այլ տեսանյութ է հրապարակել, որում հուշարձանի տարբեր մասերում ևս երևում են ադրբեջաներենով արված փորագրություններ ու գրառումներ:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայից, դրան հաջորդած էթնիկ զտումից ու հայաթափումից հետո է հատկապես «Մենք ենք մեր սարերը» արձանը գտնվում ադրբեջանցիների թիրախում: Այս ընթացքում համացանցում պարբերաբար տարածվել են տարբեր լուսանկարներ ու տեսանյութեր՝ արձանը վանդալիզմի ենթարկելու, Ադրբեջանի դրոշով կոթողի մոտ լուսանկարվելու, հայերի հասցեին վիրավորական արտահայտություններ անելու և գրառելու հետ կապված:

Ժամանակ առ ժամանակ Ադրբեջանում նույնիսկ հայտարարություններ են հնչում հայկական այս հուշարձանը քանդելու վերաբերյալ: Մասնավորապես Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր, «Արդարություն, իրավունք, ժողովրդավարություն» կուսակցության նախագահ Գուրբատ Չասանգուլիևն արձանը քանդելու առաջարկ էր արել: «Խանքենդիում (նկատի ունի Ստեփանակերտը) 1967 թվականին կառուցված է հայ ազգայնականների և հայկական անջատողականության խորհրդանիշ դարձած «Մենք և մեր սարերը» կոչվող արձանը պետք է քանդվի, և դրա տեղում պետք է կանգնեցվի ադրբեջանցի զինվորի պատվին վեհաշուք հուշարձան»,-



ասել է Չասանգուլիևը:

Ադրբեջանցի քաղաքագետ Ռամիզ Յունուսն էլ գրել է. «Բժշկությունից հայտնի է, որ երբ մետաստազները տարածվում են մարդու մարմնում, երբեմն անհրաժեշտ է լինում անհապաղ վիրաբուժական միջամտության: Նույն կերպ, որպեսզի հայկական «միացում»-ի վարակիչ մետաստազներն այլևս երբեք չհայտնվեն ադրբեջանական հողի վրա, դրանք պետք է վիրաբուժական ճանապարհով հեռացվեն արմատներով: Սա վերաբերում է խորհրդային Միության ժամանակների բոլոր հուշարձաններին, այդ թվում՝ 1967 թվականին խանքենդիում (Ստեփանակերտ) տեղադրված «Պապիկն ու տատիկը» տգեղ պատվանդանին, որը պատկերված էր, այսպես կոչված, «ԼՂՀ» զինանշանի վրա»:

Արցախում ու հատկապես Ստեփանակերտում հայկական հետքի վերացման հայտարարություններին աջակցել է նաև Մեջլիսի մեկ այլ պատգամավոր՝ Ֆազաիլ Իբրահիմլին: Նա նշել է, որ կարևոր է համարում խանքենդիում (Ստեփանակերտում) հայկական հետքերի լիակատար վերացումը՝ աջակցելով պատգամավոր Գուրբատ Չասանգուլիևի «Մենք և մեր սարերը» հուշարձանն ապամոնտաժելու վերաբերյալ առաջարկին: «Խանքենդիում կան տգեղ պատկերներ, և դրանք

բնականաբար պետք է հեռացվեն այնտեղից...», - նշել է պատգամավոր Ֆազաիլ Իբրահիմլին՝ հայտարարելով, որ նրանք, «ովքեր հարցը ներկայացնում են որպես մշակույթի ոչնչացում, թաքցնում են իրենց իրական մտադրությունները, և դա պետք է ընկալվի որպես անջատողականության նշանների վերացում»:

Չավելենք, որ «Մենք ենք մեր սարերը» հուշարձանը տեղադրվել է 1967 թվականին: Չեղինակը քանդակագործ Սարգիս Բաղդասարյանն է, ճարտարապետը՝ Յուրի Չակոբյանը: Ստեփանակերտի մուտքի մոտ՝ բլրի գագաթին, գտնվող քանդակը պատրաստված է կարմիր տուֆից: Այն խորհրդանշում է արցախյան հողի և ժողովրդի արմատների միջև կապը: Հուշարձանն իրենից ներկայացնում է ավանդական տարազով տարեց արցախցի ամուսինների՝ ուս ուսի, հպարտ ու անհողողող կեցվածքով ու սևեռուն հայացքով:

Հատկանշական է, որ Ադրբեջանին նույնիսկ Արդարադատության միջազգային դատարանի՝ դեռևս 2021 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը հետ չի պահում Արցախի հայկական կրոնական ու մշակութային ժառանգության ոչնչացման քայլերից: Դատարանն Ադրբեջանին պարտավորեցրել է «ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի և պղծման այն գործողությունները, որոնք ազդում են հայկական մշակութային ժառանգության վրա...»:

Չնայած Արցախում իր վարած մշակութային վանդալիզմի քաղաքականությանը՝ Ադրբեջանը նորից ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ՝ պարտավորվելով պահպանել մշակութային հուշարձանները:

Այնուհաստ է, որ Արցախի հայկական կրոնական, պատմական ու մշակութային ժառանգությունը շարունակում է վտանգված լինել: Բաքուն չի հրաժարվել ու չի հրաժարվելու Արցախի բնակավայրերից հայկական հետքը վերացնելու, դրանց հայկականության դիմագիծը փոխելու և ադրբեջանականացնելու գործընթացից:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ, 25.11.2025



Սկուպուայան ամսագրում լույս է տեսել «Ադրբեջանի իսլամական դիվանագիտությունը Լեռնային Ղարաբաղի 2020 թ. պատերազմի համատեքստում. Իսլամական համագործակցության կազմակերպության դերը» հոդվածը

մենատարբեր հարթակներում Ադրբեջանի ներդրած հակահայկական նարատիվները պաշտպանելով, Հայաստանի դեմ ընդունված բազմաթիվ կոշտ բանաձևերով, իսլամական աշխարհում Հայաստանը վարկաբեկելով»,- ասաց Արաքս Փաշայանը:

«Հայտնի է, որ ԻՅԿ անդամ առանձին ազդեցիկ պետություններ, ինչպես օրինակ Սաուդյան Արաբիան՝ որպես իսլամական աշխարհի շահերը պաշտպանող առաջատար պետություն, մինչև 2023 թ. հրաժարվել է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղի հակամարտության չկարգավորված լինելու փաստով: Իսլամական համերաշխության գաղափարը ծառայեցվել է ադրբեջանական շահերին, որի շնորհիվ Բաքուն ստացել է իսլամական աշխարհի քաղաքական և կրոնական վերահսկվող զգալի աջակցությունը 2020 թ. Արցախյան պատերազմում ևս: Ամփոփելի է, որ Ադրբեջանը Հայաստանի դեմ օգտագործել է իսլամական աշխարհի զգայուն թեմաներ, ինչպես, օրինակ՝ մզկիթների հարցը: Ադրբեջանն արցախյան հարցն արտահանեց իսլամական աշխարհի Հայաստանը ներկայացնելով որպես «ազրեցրած պետություն», որը,

իր, իրականացրել է «մարդկության դեմ ուղղված հանցագործություններ»: Ադրբեջանն ամեն զնով փորձեց իսլամական աշխարհում Հայաստանի դեմ բացասական մոտեցումներ և ընկալումներ ձևավորել»,- հավելեց Նազելի Նավասարդյանը՝ ներկայացնելով հոդվածը:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Առաջատար հետազոտությունների աջակցություն» «Իսլամի և ազգայնականության համագործակցությունը ՀՀ հարակից երկրներում. ինքնության և քաղաքականության կերպարները» 21AG-6A081 ծածկագրով ծրագրի շրջանակում:

Ըստ հոդվածի հեղինակների՝ հետազոտությունն ստացել է զգալի դրական արձագանք ինչպես Հայաստանի մասնագիտական, այնպես էլ միջազգային գիտական շրջանակներում: «Հետազոտության գիտական նորույթն ուղղակիորեն կապ ունի խնդիրը նոր լույսով և նոր մոտեցումներով ուսումնասիրելու հետ: Հոդվածի շրջանակներում սահմանվել է Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը՝ գիտական

շրջանառության մեջ դնելով Ադրբեջանի «իսլամական դիվանագիտություն» նարատիվը: Փաստ է, որ Բաքուն արցախյան հակամարտության ամբողջ ընթացքում օգտագործել է իսլամական դիվանագիտության գործիքը, իսկ հիմա շարունակում է կիրառել այն արդեն Հայաստանի Հանրապետության դեմ: Ամեն դեպքում ուրախ ենք, որ մեզ հաջողվել է կոնցեպտուալացնել Ադրբեջանի «իսլամական դիվանագիտություն» հասկացությունը՝ ներկայացնելով դրա տեսական ու գործնական հիմքերը, և քննել իսլամական աշխարհում Հայաստանի և հայության դեմ ադրբեջանական քաղաքականության բնույթը, դրսևորումներն ու ազդեցությունների շրջանակը»,- ասաց Արաքս Փաշայանը:

Հոդվածի հիմնական թեզերն ու հետազոտական արդյունքները ներկայացվել են մի շարք գիտավերլուծական հարթակներում, դասախոսությունների և փորձագիտական համոզիպունների ժամանակ, ինչպես նաև տարբեր հեռուստաթերթերում՝ նպաստելով թեմայի շուրջ համրային ու մասնագիտական տեղեկացվածության բարձրացմանը:


ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

«Southeast European and Black see studies» ազդեցության բարձր գործակից ունեցող (Q1 Impact Factor Best Quartile) ամսագրում հրապարակվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողներ Արաքս Փաշայանի և Նազելի Նավասարդյանի «Ադրբեջանի իսլամական դիվանագիտությունը Լեռնային Ղարաբաղի 2020 թ. պատերազմի համատեքստում. Իսլամական համագործակցության կազմակերպության դերը» (Islamic diplomacy of Azerbaijan in the context of the Nagorno-Karabakh 2020 war: the role of the organization of Islamic Cooperation) հեղինակային հոդվածը:

Հոդվածում ներկայացված են Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության փոխակերպումները, դրա հիմնական շարժառիթներն ու նպատակները, աշխարհիկ Ադրբեջանի՝ միջազգային իսլամական ընտանիքի մաս դառնալու և մուսուլմանա-

կան ինքնության շեշտադրման խորքային պատճառները: «ԽՍՀՄ-ի փլուզումից և Թուրքիայի աջակցությամբ Իսլամական համագործակցության կազմակերպության (ԻՅԿ) անդամակցելուց հետո կարճ ժամանակահատվածում Ադրբեջանը դարձավ ԻՅԿ ամենակատիվ անդամներից մեկը: Անդամակցության հիմնական նպատակներից էր ստանալ իսլամական աշխարհի աջակցությունն Արցախի և Հայաստանի Հանրապետության հետ հակամարտության հարցում: Դա էր պատճառը, որ Բաքուն զմայ արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման ճանապարհով: Հոդվածում քննարկվում է մինչև 2020 թ. Արցախյան պատերազմը, պատերազմի ընթացքում և հետպատերազմական փուլում իսլամական աշխարհի, մասնավորապես Բաքվի և ԻՅԿ-ի ցուցաբերած բազմակողմ աջակցությունը, որը դրսևորվել է ՄԱԿ-ում Հայաստանի դեմ քվեարկություններով, ԻՅԿ ա-

ՄՈՒՐԱԴ ԸԱՍՐԱԹՅԱՆ



Հայագիտությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին:

2026 թվականի հունվարի 15-ին՝ կյանքի 91-րդ տարում, կյանքից հեռացավ հայ ճարտարապետագիտության պատրիարք, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդակցան, ճարտարապետության բաժնի երկարամյա վարիչ (1988-2025), ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Մարգարի (Մորուսի) Հասարայանը:

Մուրադ Հասարայանը ծնվել է 1935թ. հունիսի 20-ին Երևանում՝ անվանի պատմաբան-բանասեր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մորուս (Մարգար) Հասարայանի և ՀՍՍՀ վաստակավոր ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյան-Հասարայանի ընտանիքում: 1952-ին ոսկե մեդալով ավարտելով Երևանի Խ. Աբովյանի անվան արական միջնակարգ դպրոցը՝ Մ. Հասարայանը ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժանմունք, որը գերազանցությամբ ավարտել է 1958-ին և որպես ավագ ճարտարապետ աշխատանքի անցել նորաբաց «Երևաննախագիծ» ինստիտուտի Պետական գիտական կենտրոնում: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են բնակելի և վարչական շենքեր, դպրոցներ, նա հեղինակել է Լուկաշինի անվան սովետաբանության և Քանաքեռի-Էրեբունի քաղաքների հատակագծերը: Երիտասարդական կառույցների նախագծման համար 1970-ին երիտասարդ ճարտարապետն արժանացել է ՀԽՍՀ մրցանակի, իսկ տասնամյակներ անց՝ 2007-ին՝ ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման:

1964 թվականին Մ. Հասարայանը աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, 1971-1976 թթ. եղել է գիտքարտուղար, 1979-1985 թվականներին ղեկավարել է Պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի նորաստեղծ բաժինը, իսկ 1988-2026 թվականներին՝ ճարտարապետության բաժինը: 2026 թվականին Մ. Հասարայանը մշակվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդակցան:

1969 թ. Մ. Հասարայանը պաշտպանել է ատենախոսություն՝ «Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները» թեմայով (առանց գիտական ղեկավարի) և ստացել ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: 1973 թ. ԽՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից Հասարայանն ստացել է «ավագ գիտական աշխատողի» կոչում՝ «ճարտարապետության տեսություն և պատմություն» մասնագիտության գծով:

1993-ին Մ. Հասարայանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանի XV-XIX դդ. սկզբի ճարտարապետությունը» թեմայով և ստացել Ռուսաստանի Դաշնության ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան: 2003-ին Մ. Հասարայանը ստացել է «ճարտարապետություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական

խորհրդի առաջադրմամբ 2006-ին Մ. Հասարայանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դրանից մեկ տարի առաջ՝ 2005-ին, Մ. Հասարայանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն» շարքի 2-րդ համարը՝ «Մուրադ Հասարայան», որի լրամշակված տարբերակը հրատարակվեց 2015-ին՝ գիտականի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Մ. Հասարայանի շուրջ երկու տասնյակ գրքերը, բազմաթիվ բրոշյուրներն ու հարյուրավոր գիտական հոդվածները լույս են տեսել Հայաստանում, Մոսկվայում, Կիևում, Թբիլիսիում, Փարիզում, Լիոնում, Վիեննայում, Լիսաբոնում, Դոմոնում, Վենետիկում, Միլանում, Բոլոնիայում, Նեապոլում, Քյոլնում, Հալլեում, Լեյդենում, Չամոստյեում, Բեյրութում, Հալեպում, Տոկիոյում, Մոնրեալում, Անկարայում, Վարշավայում:

Մ. Հասարայանը ճարտարապետության այն եզակի պատմաբանն է, որն ուսումնասիրել է հրատարակել է հայ ճարտարապետության ամբողջական պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը, ընդ որում ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն ու ֆրանսերեն՝ օտարալեզու ընթերցողի համար:

1985-ին Մոսկվայում լույս տեսած «Ալեքսանդր հայ ճարտարապետության» («Очерк армянской архитектуры», «Essai sur l'architecture arménienne») մենագրության մեջ նա առաջին անգամ ներկայացրեց հայ ճարտարապետության անցած ուղին իր սկզբնավորումից մինչև 20-րդ դարը, իսկ 2010-ին Լիոնում ֆրանսերենով հրատարակվեց «Հայ ճարտարապետության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունը («Histoire de l'architecture arménienne des origines n nos jours»): «Հայ արվեստի պատմություն» աշխատության համար, որտեղ Մ. Հասարայանը հեղինակել է հայ ճարտարապետության պատմությանը նվիրված բաժինները, նա արժանացել է 2009 թ. ՀՀ պետական մրցանակի: Մ. Հասարայանը է հեղինակել «Հայոց պատմություն» քառահատորի՝ հայկական ճարտարապետության վերաբերյալ բոլոր հոդվածները:

Ծանրակշիռ է Մ. Հասարայանի ներդրումը հատկապես ուշ միջնադարի («Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները», 1973) և վաղ միջնադարի («Армянская архитектура раннего христианства», «Early Cristian Architecture of Armenia», 2000, Մոսկվա) հայկական ճարտարապետության, Արցախի ճարտարապետության («Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը», 1992), ճարտարապետական առնչությունների (հայրյուզանդական, հայ-սիրիական, հայ-իրանական, հայ-վրացական) ուսումնասիրության գործում:

Պրոֆեսոր Հասարայանը երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում՝ իր փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա ճարտարապետներին ու մշակութաբաններին:

2010-ին Մ. Հասարայանը արժանացավ ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակին՝ իր արժանի տեղը զբաղեցնելով հայ ճարտարապետության ամբողջ ուսումնասիրողներ Նիկոլայ Տոկարսկու, Վարազդատ Հարությունյանի, Հովհաննես Խալիփաջյանի, Ալեքսանդր Սահինյանի, Պաոլո Կունենոյի և Ադրիանո Ալպագո Նովելլոյի կողքին:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Մ. Հասարայանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Վաստակագրով, ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով», ՀՀ ԿԳՄՍՍ «Ոսկե հուշամեդալով», ՀՀ վարչապետի հուշամեդալով, արժանացել է ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման:

Մեծ գիտնականի, ազնիվ մտավորականի և լուսավոր մարդու անթառամ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտում:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՍՈՒՆԵ
ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գիտնականներն առաջին անգամ եզակի լազերային եղանակի օգնությամբ հետազոտել են Դարվիլի տարաները

Գիտնականները մշակել են նորարարական մեթոդ՝ թանգարանային փակված մուշտիկների տարաների մեջ հեղուկների քիմիական կազմը վերլուծելու համար՝ առանց դրանք բացելու անհրաժեշտության. դա հատկապես կարևոր է գրեթե 200 տարի առաջ հավաքված հավաքածուների համար, դրանց թվում՝ Չարլզ Դարվիլի անվան առնչվող մուշտիկների համար:

Ֆորմալինով, սպիրտով կամ այլ հեղուկներով լցված այդ տարաները պահպանում են կենսաբանական մուշտիկները, սակայն հին քիմիական նյութերը կարող են թունավոր կամ անկայուն լինել, իսկ տարաների բացումը կարող է հանգեցնել գոլորշիացման, հյուսվածքների վնասման կամ արժեքավոր օբյեկտների կորուստի:

Մեթոդը հիմնված է տարածականորեն տեղաշարժված Ռամանի սպեկտրասկոպիայի (SORS) վրա. շարժական լազերային տեխնոլոգիա, որն ուղղորդում է լույսը տարայի ապակու միջով և վերլուծում, թե ինչպես է ճառագայթը ցրվում հեղուկի մեջ: Դա հնարավորություն է տալիս քիմիական բաղադրիչները նույնականացնելու՝ առանց պարունակության մեջ ֆիզիկապես մուտք գործելու:

Հետազոտողների մի խումբ այդ մոտեցումը կիրառել է թանգարանային պահեստից վերցրած 46 փակված մուշտիկների, այդ թվում՝ «Բիզլ» նավով Դարվիլի հայտնի ճանապարհորդության ժամանակ նրա ձեռքով հավաքված ձկների, ինչպես նաև կաթնասունների և անողնաշարավորների վրա: Մեթոդը լիովին նույնականացրել է հեղուկները դեպքերի մոտավորապես 80%-ում և մասամբ 95%-ում: Նման տվյալները կարևոր են հավաքածուի պատշաճ կառավարման համար, քանի որ կազմի ճշգրիտ իմացությունն օգնում է գնահատել, թե երբ է անհրաժեշտ միջամտություն՝ մուշտիկները պահպանելու համար:

Կազմի տարբերություններ են հայտնաբերվել՝ կախված կենդանու տեսակից. օրինակ՝ կաթնասուններն ու սողուններն ամենից հաճախ նախ մշակվել են ֆորմալինով, ապա՝ պահպանվել սպիրտի մեջ, մինչդեռ անողնաշարավորները կարող էին պահվել այլ, հաճախ գլիցերինով կամ պրոպիլենգլիկոլով խառնուրդներում:

Թանգարանների համար գիտական առավելություններից գատ, այս եղանակը նվազեցնում է այն աշխատակիցների ռիսկերը, որոնք նախկինում ստիպված էին լինում բացել տարաները սովորական վերլուծության համար, ինչը կարող էր նրանց ենթարկել վտանգավոր գոլորշիների կամ նյութերի ազդեցությանը:

NEWS.am, 11.02.2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ ՊՈՒԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կարգերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. դեկտեմբերի 21-ի N 2298-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 30-ի N 102-Ն որոշումների դրույթների՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

- 1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.
 - 2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.
 - 3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) ունի ՄԳԸ-ում համահեղինակած առնվազն մեկ հրապարակում կամ մեկ մենագրություն.
 - 4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) ՄԳԸ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն մեկուն հանդիսացել է որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
- ա) դիմում,
 - բ) լուսանկար,
 - գ) ինքնակենսագրություն,
 - դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
 - ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,
 - զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ,
 - է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
 - ը) հրապարակված աշխատանքների ցանկ,
 - թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
 - ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:
- Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակվելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 58-55-59:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՒՎԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16 Դասիչ՝ 69268,
գրանցման վկայական՝ 448: Էլ. հասցեն՝ armine.pet21@mail.ru
Ստորագրված է տպագրության՝ 24.02.2026 թ.: Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: